ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

0078 Երևան, Հալաբյան 41 ա, հեռ. 380389
էլ. փոստ info@moj.am

1737-10
17-06-10

Հայաստանի Հանրապետության
արտաքին գործերի նախարարի տեղակալ
պարոն Շ. Քոչարյանին

Ի պատասխան ՀՀ ԱԳՆ 2010թ. մայիսի
25-ի 16/07708-10 թվակիր նամակի

Հարգելի պարոն Քոչարյան,

Ուղարկում ենք «Սեռական շահագործումից և սեռական բնույթի բռնություններից երեխաների պաշտպանության մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիայի ստորագրման նպատակահարմարության վերաբերյալ ՀՀ արդարադատության նախարարության տեղեկանքը:

Առդիր՝ 2 էջ:

Հարգանքով՝
Նախարարի տեղակալ *Է. Բաբայան*

Միջազգային իրավական հարաբերությունների վարչություն
հեռ. 38 02 48

Հայաստանի Հանրապետության
Արտաքին գործերի
նախարարություն
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱՍԻՆ
մուտք թ. 14337
16 թ.
17 JUN 2010

ՀՀ արդարադատության նախարարության
Տեղեկանքը
Սեռական շահագործումից և սեռական բնույթի բռնություններից
երեխաների պաշտպանության մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիայի
ստորագրման նպատակահարմարության մասին

Սեռական շահագործումից և սեռական բնույթի բռնություններից երեխաների պաշտպանության մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիան ստորագրվել է 2007թ. հոկտեմբերի 25–ին, Լանզարոտում: Կոնվենցիան ուժի մեջ կմտնի 2010թ. հուլիսի 1–ին. Կոնվենցիայի ուժի մեջ մտնելու համար դրանով նախատեսված պահանջը, այն է՝ Կոնվենցիայիով պարտավորված լինելու մասին իրենց համաձայնությունը պետք է արտահայտած լինեն հինգ ստորագրող Պայմանավորվող կողմեր, այդ թվում՝ Եվրոպայի խորհրդի առնվազն երեք անդամ պետություններ, բավարարված է: Կոնվենցիան վավերացվել է Ալբանիայի, Դանիայի, Հունաստանի, Նիդեռլանդների Թագավորության և Սան Մարինոյի կողմից: Կոնվենցիան ստորագրությամբ իրենց հավանությանն են արժանացրել 33 պետություն, որոնց թվում են մերձբալթյան պետությունները, կովկասյան պետություններից Ադրբեջանը, Վրաստանը և եվրոպական գրեթե բոլոր պետությունները:

Կոնվենցիայի նպատակն է կանխել երեխաների սեռական շահագործումը և սեռական բնույթի բռնությունները և պայքարել այդ դրսևորումների դեմ, պաշտպանել սեռական շահագործման և սեռական բնույթի բռնությունից տուժող երեխաների իրավունքները և խթանել պետական և միջազգային համագործակցությունը երեխաների շահագործման և սեռական բնույթի բռնությունների դեմ պայքարի բնագավառում:

Ի թիվս այլոց Կոնվենցիայով նախատեսվում է հետևյալ հարցերի կարգավորումը՝ երեխաների հետ անմիջական շփում ունեցող անձանց աշխատանքի նպատակով հավաքագրումը, վերապատրաստումը և նրանց իրազեկության բարձրացումը, երեխաների կրթությունը (խնդրո առարկայի շուրջ իրազեկվածության բարձրացումը), միջոցառումներ նախատեսված լայն հասարակության համար, երեխաների, մասնավոր սեկտորի, լրատվամիջոցների և քաղաքացիական հասարակության մասնակցությունը սեռական բնույթի բռնություններից երեխաների պաշտպանության գործին:

Կոնվենցիան առնչվում է նաև երեխաների պաշտպանության ոլորտում մասնագիտացված գործակալություններին և համակարգող մարմիններին, պաշտպանիչ միջոցառումներին և տուժողների համար անհրաժեշտ աջակցությանը:

Կոնվենցիայով հստակ սահմանվում են այն արարքները, որոնք Կոնվենցիայով պարտավորված յուրաքանչյուր պետություն պետք է համարի քրեորեն պատժելի արարք և հաշվի առնելով օրինախախտման ծանրությունը՝ նախատեսի արդյունավետ, համաչափ և տարհամոզիչ պատժամիջոցներ:

Հատկանշական է նաև, որ պետք է իրականացվի սեռական բնույթի հանցագործությունների համար մեղավոր ճանաչված անձանց մասին պետական տվյալների գրանցում և պահպանում: Ավելին, ի դեմս «Պայմանավորվող կողմերի կոմիտեի» ստեղծվում է վերահսկման մեխանիզմ, որը ոչ միայն հսկում է պետությունների կողմից կոնվենցիայի կիրարկումը, այլև բարենպաստ պայմաններ է ստեղծում պետությունների միջև տեղեկատվության, փորձառության և լավագույն պրակտիկայի հավաքագրման, վերլուծության և փոխանակման համար՝ նպատակ

ունենալով բարելավել երեխաների սեռական շահագործման և սեռական բնույթի բռնությունների իրականացման կանխարգելման և այդ դրսևորումների դեմ պայքարի բնագավառում նրանց կարողունակությունը:

Հաշվի առնելով այն կարևորագույն հանգամանքը, որ երեխաների բարեկեցությունը և նրանց բարձրագույն շահերը հիմնարար արժեքներ են, որոնց լավագույնս սատարում է Հայաստանի Հանրապետությունը, ինչպես նաև հիմք ընդունելով սեռական շահագործումից և սեռական բնույթի բռնություններից երեխաների պաշտպանության գործում միջազգային համագործակցության անհրաժեշտությունը, նպատակահարմար ենք գտնում Հայաստանի Հանրապետության կողմից կոնվենցիայի ստորագրումը: